

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
նախագահ պրն. Ա. Զավադյանին**

Հարգելի պարոն Զավադյան

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կանոնակարգ 4/04-ի, 50-րդ կետի Ձեզ եմ ներկայացնում 'Շեն-Կոնցեռն' ՓԲԸ-ին վերաբերող 16.05.13թ-ի էական տեղեկությունը, որը նաև տեղադրված է նաև մեր պաշտոնական կայքում (կցվում է առդիր 1 թերթ):

Տնօրեն

Պապ Բադալյան

16.05.13թ.

**համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 4/04 կանոնակարգի 50-րդ կետի՝
բացահայտում եմ «ՇԵՆ-Կոնցեռն» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական տեղեկությունը.**

2013թ-ի մայիսի 13-ին տեղի ունեցավ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով, որի ընթացում քննարկվեցին նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատելու և տեղաբաշխված կանոնադրական կապիտալը գրանցելու հարցեր, որոնց վերաբերյալ մասնավորապես ընդունվեցին հետևյալ էական որոշումները՝

1. Ընկերության լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքում հաստատվեց Ընկերության կանոնադրական կապիտալի մեծությունը և սահմանվեց, որ Ընկերության կանոնադրական (բաժնետեղաբաշխված) կապիտալը 3 350 000 000 (երեք միլիարդ երեք հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ է, որը կազմում է 335 000 (երեք հարյուր երեսունհինգ հազար) հատ տեղաբաշխված հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, որոնց յուրաքանչյուրի անվանական արժեքը 10 000 (տաս հազար) ՀՀ դրամ է:

2. Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի և Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի համատեղ ջանքերով Ընկերությունում իրականացրած կորպորատիվ կառավարման գնահատման արդյունքները, որոնցում խորհուրդ էր տրվում Ընկերության կանոնադրությունը համապատասխանեցնել կորպորատիվ կառավարման միջազգային սկզբունքներին,

3. Ընկերության վերաբրենդավորման ռազմավարության որդեգրումը, որի արդյունքում փոխվում է և Ընկերության ֆիրմային անվանումը, և ապրանքային նշանը, ու Ընկերությունը շուկայում դիրքավորվելու է “ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ” ֆիրմային անվանումով և ապրանքային նշանով: